

դտնուի նաեւ Հայոց Ս. Խաչ եկեղեցին։ Ս. Մարկոսի տաճարին մուտքի պորտիւրէ սիւներուն վրայ կարգացինք հայատառ արձանագրութիւնները, Յովհաննէս, Գրիգոր, Եղիազար, հանդերձ առնթեր թրւականներով. բոլորն ալ 1500ի կամ 1600ի շրջանէն. յարգելի փրոֆէսորը շատ դարմանալի գտաւ այս երեւոյթը. հուսկ այցելեցինք նաեւ Կոռնարոյ թաղուհիին դերեմանը, Սան Սարգիստոր եկեղեցիին մէջ, եւ մուտքին մէջ ճրագի լոյսով կարգացինք «Թաղուհի Հայաստանի» բացատրութիւնը՝ հսկայ տապանաքարին վրայ։

Փրոֆ. Մերգելեան՝ Մուրադ-Ռաֆայէլեանի մէջ ալ հետաքրքրուեցաւ մեր աշակերտներով, նոյնիսկ անոնց ուսումնական մակարդակով, զոր բաւական բարձր գտաւ, մանաւանդ թուարանական մարդին մէջ. բարձրագոյն դասարաններու տուաւ քանի մը դասախօսութիւններ։ Նոյնիսկ Փիլիքականով կայտառ եւ առոյգ գտաւ մեր հայորդիները։

Հակառակ իր երիտասարդ տարիքին, իսկապէս մեծ գիտնական մըն է Փրոֆ. Ս. Մերգելեան. մանաւանդ ունի իսկական գիտնականի մեծ յատկութիւնը. ծայր աստիճան համեստ է եւ զիտէ գնահատել

իսկական արժէքները, նաեւ թուարանական մարդէն դուրս. այնպէս որ իր համակրելի բնաւորութեան տակ ծածկած է այն մեծ հռչակը որ իր ետեւէն ստուերի նման կը քալէ։ Ու քալած է Երեւանէն մինչեւ Հոռոմ։ Ռուսական պատուիրակութիւններու հետ այցելած է նաեւ Հնդկաստան, Չինաստան։

Վենետիկի այս խաղաղ միջավայրին մէջ Փրոֆ. Մերգելեան իսկապէս կ'ըմբռնէր միջավայրին անդորը նուիրակաւորութիւնը. թուարանական հաշիւներու եւ բաղմարարդ գործիքներու մէջ տարիներով թափառող, բայց նաեւ տեսաբանի հայեցողական բնածին ձկնորմանով եւ նկարագրով օժտուած, իսկապէս նոր աշխարհի մը մէջ կը դգար ինքզինքը թէ՛ Վենետիկ, Ս. Ղազարի Հայրերուն ընկերութեան մէջ, թէ նաեւ Հոռոմ, ուր նոյնպէս մեր Միսիթարեան Հայրերը առիթն են ունեցած զինք ճանչնալու եւ հիւրասիրելու։

Կը մաղթենք իրեն նորանոր եւ անընդհատ յաջողութիւններու ոսկեղէն շրջան մը, ի սպաս հայրենիքի վերելքին, ի սպաս բովանդակ մարդկութեան եւ ի սպաս զիտական արժէքներու։

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

• ԳՐԱԽՕՍԱԿԱՆ •

ՄԵԾ ԵՂԵՆԻ ՆԱՀԱՏԱԿ ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԸ. – Գրեց՝ Տոքթ. Գ. Մ. Կարոյեան։ Տպ. Պոսթոն, 1957, էջ 557, պատկերազարդ։ Գին՝ 5 տոլար։

Արցունքով եւ արիւնով հիւսուած դափնեպսակ մը՝ մարտիրոս հայ բժիշկներու նուիրական յիշատակին. յիշատակին անոնց՝ որ անդերեզման անհետացան այս աշխարհէն։ Նաեւ սիրոյ ու պաշտամունքի անկեղծ տուրք մըն է այս գործը, նահատակներու արուեստակից կրտսերի մը կողմէ, զետեղուած մեր ազգային անմահներուն պանթէոնին վրայ։

Դժուարին եղած է նաեւ երկունքը այս հատորին. ու կրնանք ըսել թէ հեղինակն ալ ասով քալած է իր աքսորի կեանքը եւ... նահատակուած։ Հայրենիք օրաթերթի միջոցաւ տուած բաղմաթիւ կոչերուն մէկ կին միայն հաճած է պատասխանել. դրաւոր թղթակցութիւններէն շատերը մնացած են անպատասխան։ Ու ինք զրեթէ միս մինակ տարիներու պրպտումով եւ համբերատար աշխատանքով ի զուրկ հանած է այս չքնաղ հատորը, համախմբելով ինչ որ ասդին անդին կար տարողնուած. աւելցուցած է իր ակնանտեսի յուշերն ու խորհրդածութիւնները, մանաւանդ վերջին բաժնին մէջ, որ նուիրուած է հայկական արդի պատմութեան։

Հայ բժիշկներու պատմութեան կոթող մըն էր որ վերջերս հրատարակուեցաւ Իսթանպուլի մէջ, Տոքթ. Ա. Ն. Մեղպուրեանի կողմէ. Հայ եւ ծագումով հայ բժիշկներ, որուն Ա. հատորը 1688-1864ի շրջանը միայն կ'ամփոփէ։ Երկրորդ հատորը տակաւին լոյս չէ տեսած։ Եւ ահա Տոքթ. Գ. Մ. Կարոյեանի յուշարձանը կու գայ լրացնել այդ պակասը։

Մարտագրեցիկ էջեր կը վերանորոգեն մեր ազգային Գողգոթայի տխուր պատկերը, ուր Սեւակներ եւ Տաղաւարեաններ կ'իշխան կարմիր էջերը գրելով մեր ահաւոր ողբերգութեան։

Հատորը, պատկերազարդ, ամփոփ գիծերով կու տայ իւրաքանչիւր նահատակի կեանքին ու գործերուն վերլուծումը, յաճախ համեմատած՝ անմահներուն պատգամներով։ 48 նահատակներու նուիրուած բաժինէն վերջ, կը ներկայանան Համալ-

սարանական հնազոյն բժիշկներ՝ որոնք պաշտօնավարած են Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ. յետոյ կայսերական Բժշկ. Վարժարանի Հայ ուսուցչապետները, հուսկ՝ Հին թէ՛ Նոր աշխարհի հայ բժշկական արժէքներէն ոմանք, ինչպէս նաեւ Հնդկահայ անուանի բժիշկներ։ Ամէնէն վերջ, գաղթաշխարհի հայութեան բժշկական շարժումները, ակադեմիկոսները։ Այս վերջին մասին մէջ է որ Տոքթ. Գ. Մ. Կարոյեան երկար ընդամենով իր բուն նիւթէն՝ կ'անցնի պատմական մարդին մէջ, օգտաշատ խորհրդածութիւններով եւ վերլուծումներով։

Վստահ ենք թէ այս հատորը պիտի գտնէ նաեւ բաղմաթիւ ընթերցողներ, եթէ չգտաւ աշխատակիցներ. եւ այս՝ անշուշտ հոգեկան մեծ դոհունակութիւն պիտի պատճառէ հեղինակին։

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՖԱՐՄԱՆ ՄԱՆԿԱՆՆ. – Հրտ. Շուշանիկ Նազարեան։ – Փոքր ութաձալ, լաքակազմ, 196 էջ։ Երեւան, 1957։ Գին՝ 6 ռուբլի։

Նախապէս արդէն երկիցս հրատարակուած այս ոտանաւոր հէքեաթը հոս դարձեալ վերստին կը հրատարակուի, սակայն այս անգամ գիտական համեմատութեամբ՝ զանազան ձեռագիրներու եւ ուսումնասիրութեամբ։

Տարակոյս չկայ որ նիւթը պէտք էր վերհրատարակել։ Հայերէն հրատարակութիւններէն առաջինը, կատարուած 1724ին, Կ. Պոլիս, այժմ անգտանելի է։ Իսկ երկրորդ հրատարակութիւնը Անահիտ ամսագրին մէջ (1904-5) առ հասարակ դժուար է գտնել։ Յարգելի հեղինակուհին, Շուշանիկ Նազարեան, կը խոստովանի որ երկու հրատարակութիւններն անմատչելի մնացած են նոյնիսկ իրեն, Երեւանի պէս մատենադարաններով ճոխ վայրի մէջ։ Սակայն իր բնագրի հրատարակութեան համար՝ աչքի առաջ ունեցեր է Երեւանի պետական հաւաքման 9 ձեռագիրները եւ Անահիտի հրատարակութիւնը։ Դարձեալ իրեն յայտնի եղած է գոյութիւնը Վենետիկի հաւաքման մէջ չորս ձեռագիրներու, որոնք չէ կրցած օգտագործել։ Բնական է ըլլալու են ձեռագիր-

ներ նույն ոտանաւորը պարունակող՝ նաեւ Վիեննայի, Սադէմի եւ ուրիշ հաւաքածոներու մէջ: Ամէն պարագայի տակ, իմ ձեռագրաց հաւաքածոյիս մէջ կայ տաղարան մը, ուր Պղնձէ Գաղաթին ընտիր մէկ օրինակին հետ կայ նաեւ Փարման Մանկան պատմութեան մէկ լաւ օրինակը, որուն վերջը գրիչէն կայ սա յիշատակութիւնը. « Գրեցաւ տետրակս պատմութեան թիւին ՌՃԼԱ (1682) աղբիւրի ի Դ (4) աւրն երկուշարթի ի վայելումն Մալխասին »: Իմ այս օրինակս ունի փոքր տարբերութիւններ հրատարակուած օրինակներէն:

Իմ ալ եղբակացութիւնս այն է որ այս ալ Պղնձէ Գաղաթի պատմութեան եւ Փէշլու թագաւորի պատմութեան պէս Հայկական ստեղծագործութիւններ են, ժամանակուան բարբառով խմբագրուած: Ասոնց ծագումը անտարակոյս ԺԴ. դարէն պէտք է հաշուել: Երբ ԺԶ. դարու առաջին կէսին Յովսէփ եւ մանաւանդ Գրիգորիս կաթողիկոս Աղթամարցիին վերըտին կենդանացուցին եւ ժողովրդականացուցին այս հին գրաւոր հէքեթները, այն ատեն Փարմանի Մանկան պատմութիւնն ալ վերստին ժողովրդականացաւ: Այս է պատճառը որ ցարդ մեղի հասած օրինակները Վենետիկի մեր վանքին 1563 թուականով օրինակէն աւելի հին չեն: Թէեւ հեղինակուհին կը գրէ որ Երեւանի թիւ 3595 ձեռագիրը ԺԵ. դարէն է եւ զրբիչ կը նշանակէ Յովսէփ, սակայն կրնայ թուականի մասին այդ կարծիքը սխալ ըլլալ եւ ձեռագիրը ԺԶ. դարու զրջութիւն ըլլայ: (Յովսէփ զրբիչը կարելի է նոյնիսկ Աղթամարցիին ըլլայ՝ ուսուցիչ Գրիգորիսի):

Գալով տաղս կոտանդին Երզնկացոյ, Առաքել Բաղիչեցոյ, Յովսէփ Սեբաստացոյ եւ կամ ուրիշ տաղասացներու վերագրելու դանդաղ փորձերուն, որովհետեւ անոնց եւ Փարման Մանկան պատմութեան տաղին հետ լեզուի նմանութիւններ կան, ատիկա երբեք պատճառ մը չի կրնար ըլլալ տաղը այս կամ այն հեղինակին վերագրելու: Յիշուած տաղասացներէն բոլորէն ալ աւելի հին է տաղին ստեղծագործութեան ժամանակը, եւ այդ տաղասացները կրնային կարգացած եւ տպաւորուած ըլլալ ասկէ: Ասիկա հաւանականութիւն մըն է որ չէ կարելի անընկալ թողուլ:

Կ'աւարտեմ գրախօսականս, ըսելէ վերջ որ բնատուր հրատարակութիւնը լաւ ծա-

նօթագրուած է, ունի ընտիր բառարան՝ զփութարիմաց եւ օտար բառերու:



ԺԴ. ԴԱՐԻ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐՄՆԵՐ: — Կազմեց՝ Լ. Ս. Սաչիկեան: Մեծ ութ-աձալ, կիսալար-խաւաքար, էջ 760: Հրատարակութիւն Երեւանի Գիտութ. Ակադեմիայի: 1950, Գին՝ այս կազմով 45 ռուպլի 50 կոպ.:

Յիշատակարաններու այս մեծարժէք հաւաքածոն կազմող հրատարակիչը՝ Լ. Ս. Սաչիկեան, խիստ դուրեկ գործ մը կատարած է, վերջապէս ուսումնասիրողներուն տրամադրելով մեր պատմութեան այս ամենակարեւոր աղբիւրները: Ան՝ ամենայն խնամքով հրատարակած է եւ ծանօթագրած իրեն մատչելի յիշատակարանները, այսպէսով դանոնք տրամադրելով ուսումնասէրներու, որոնք այլապէս անկարող պիտի ըլլային անոնցմէ օգտուելու:

Յիշատակարաններու այս հաւաքածոն, ինչպէս ընդհանրապէս հայերէն ձեռագրաց յիշատակարաններուն մեծագոյն մասը, ինչպէս որ Սաչիկեան ալ կ'ըսէ, ոչ միայն թանկագին, անկասկածելի աղբիւրներ են մեր մատենագրութեան եւ պատմութեան համար, այլ եւ մեր դրացի բարեկամ թէ թշնամի ժողովուրդներու եւ իրենց պետական պատմութեան համար:

Սաչիկեանի կը պարտինք ԺԴ. դարու, այսինքն 1301էն մինչեւ 1400 թուական, 845 յիշատակարաններ, որոնցմէ 513ը Երեւանի ձեռագրատան ձեռագիրներէն, եւ 332 հատ ալ տպուած կամ անտիպ ձեռագրական ցուցակներէ:

Սաչիկեան յոռաջարանով կը վերլուծէ յիշատակարաններուն պարունակութեան արժէքը:

Բնական է Սաչիկեանի կամքէն եւ ցանկութենէն բոլորովին անկախ, գլխաւորաբար իրեն անմատչելի մնացած ըլլալուն համար, դեռ կան բազմաթիւ յիշատակարաններ՝ որոնք այս հաւաքածոյին մէջ չեն: Անտարակոյս Սաչիկեան չէր կրնար լիապէս օգտուիլ Վենետիկի, Վիեննայի եւ մանաւանդ Երուսաղէմի մեր ձեռագրական հաւաքածոներուն չհրատարակուած ցուցակներուն յիշատակարաններէն, եւ ոչ ալ անհատական հաւաքածոներէն, որպէս իմ անձնական հաւաքածոյէս՝ աւելի քան 300 ձեռագիր, Սըր Զէսդըր Պիդիի (Տըպլին), Պրն. Հաղարեանի եւ Պրն. Գէորգ-

եանի (ի Նիւ Եորք) հաւաքածոներէն, որոնց իւրաքանչիւրը ունի 50ի մօտ ձեռագիրներ: Ասոնց մասնաւոր ճիշդ մը ընելու, պիտի տամ այս հաւաքածոյին մէջ պակասող յիշատակարաններու համառոտ ցանկ մը՝ գրախօսականիս վերջը:

Սաչիկեան հրատարակուած յիշատակարաններուն մասին ալ ունիմ կարգ մը ճշտումներ, որոնք աւելորդ չեմ նկատեր գրախօսականիս մէջ նշել:

Հաւաքածոյին թիւ 45, որ Երեւանի 2839 Մաշտոցն է, գրուած է 1305ին. Սաչիկեան տեղ չէ նշանակած զրջութեան համար, որ անտարակոյս Երզնկա է, քանի որ յիշատակարանին մէջ կը յիշուի «ի հայրապետութեան տեառն Ներսէսի», որ Երզնկայի այդ անուամբ Արքեպիսկոպոսն է Թոռն Սարգիս Մեծ կամ Ա. ին Երզնկայի նահատակ Արքեպիսկոպոսին: Ներսէս կը յիշուի 1289էն 1305:

Հաւաքածոյին թիւ 52ին գրիչ «անպիտան եւ յետին սպասաւոր բանի Միսիթար» պիտականուն վարդապետն է Մեծոփայ վանք նոյնիսկ Միսիթար Կէրմանցիին կամ Սանեցիին է: Համեմատէ յիշատակարանի զրջի մասին վկայութեան նոյնութիւնը թիւ 67 յիշատակարանի հետ, զրեալ 1307ին, որ այժմ մաս կը կազմէ իմ հաւաքածոյիս: Իսկ թիւ 53 յիշատակարանին զրբիչ «գալմար զրբիչ Միսիթար», որ Սաչիկեան կը նոյնացնէ լուսանցի տակ ծանօթութեամբ թիւ 52ի զրբիչին հետ, զրբի ստորագրութեան ձեւէն դատելով՝ հաւանաբար ուրիշ զրբիչ մըն է եւ Սաչիկեան կը սխալի այդ անթուական եւ զրջութեան տեղը չյիշուած յիշատակարանին զրբիչ Միսիթարը (53ի) նոյնացնելով 52ի զրբիչին, թուականին եւ վայրին հետ:

Թիւ 100 յիշատակարանը անմեկնելի պատճառաւ մը կիսով միայն հրատարակուած է: Չհրատարակուած մասին մէջ զրբիչը Կարապետ քահանայ կը յիշէ նոյն տարին իր տղուն՝ Թորոսին մահը: Հրատարակուած է նաեւ Լալայեան ցուցակին էջ 155-6:

Թիւ 107 Յակոբ Կիլիկեցիէ զրուած է, սակայն Սաչիկեան տեղ չէ նշանակած: Որեւէ տարակոյս չի կրնար ըլլալ որ հոն յիշուած «գերահոգակ բարունապետ Մովսէս» նոյնիսկ Երզնկացին է, որուն չինած Սրբոյն Գրիգորի անապատին մէջ զրուած է այս Երեւանի թիւ 5077: Ս. Գրիգորի այս անապատը, որուն եկեղեցի-

ներ կը յիշէ յիշատակարանը Ս. Մինաս, Ս. Կարապետ, Ս. Աստուածածին, նոյն իսկ Աւագ վանքն է, ուր էր Մովսէս Երզնկացի այն ատեն, եւ որ վերակերտողը եղաւ վանքին: Ուրեմն զրջութեան վայր պէտք է նշանակել Աւագ վանք:

Թիւ 58ի յիշատակարանը՝ Երեւանի թիւ 2520էն, Սաչիկեանի հրատարակութեան մէջ տող մը պակաս ունի ըստ իմ հրատարակութեանս (կամ երկու տող՝ ըստ Սաչիկեանի հրատարակութեան):

.... Կարօտութեամբ անպատմելի, Այլ աղաչեմ գրաբունդ բարի, յիշման առնէ՛ք զիս արժանի (Տէս իմ «Երիգա եւ Եկեղեցաց գաւառ, Ա. հատոր, էջ 190):

Պակասաւոր է նաեւ Սաչիկեանի հրատարակած թիւ 83 յիշատակարանը: Ան պէտք է հրատարակէր նաեւ կարեւոր յիշատակութիւնը, ուր կ'ըսուի. «Զրմաստակէս անարժանս աղաչեմ՝ յիշել ի տէր»: էջ 153ա. «Եւրեյն անբաւիցն՝ անբաւ բընակցութեանցն փառք յիմէ յանարժան բերանոյս ի Ստեփաննոսէ»:

Վենետիկի մեր վանքին այս թիւ 268 Ոսկեփորիկին (Սարգիսեան, Բ. էջ 882) զրբիչ նշանակուած է Յովհաննէս, մինչ ան՝ առ առաւելն զրբիչներէն մին է միայն, որ իր հօրեղբոր՝ Կիրակոս Երզնկացիի կը նուիրէ Ոսկեփորիկը: Ձեռագրին միւս զրբիչներն են Առիստաղէս եւ Ստեփաննոս: Ասոնք կը գործէին Արտաղ դաւառի Սր. Թաղէոսի վանքին զպրոցին մէջ: Այս վանքը ծանօթ է իբր Ծործորու վանք: Սաչիկեանի հաւաքման թիւ 151ը զրուած է նոյն այս Առիստաղէս զրբիչն 1315ին, Արտաղու Ս. Թաղէոսի վանքը: Առիստաղէս կը յիշէ վանականներուն շարքին նաեւ Ստեփաննոս: Կը յիշէ նաեւ զբարունապետս զՅովհաննէս եւ զԿիրակոս, որոնք անտարակոյս մեր Երզնկացիներն իսկ են: Ուրեմն Վենետիկի Ոսկեփորիկին տեղն ու թուականը աւելի յարմար է նշանակել 1315 եւ Արտաղու Ս. Թաղէոս կամ Ծործորու վանքը, ուր նոր կ'երեւայ Առիստաղէս: Հոն, այսինքն Արտաղ զրբուած ըլլալու է նաեւ Սաչիկեանի թիւ 82ը, 1309ին, ըստ երեւոյթի նոյն զրբիչ Յովհաննէսէն՝ որ գրած է Սաչիկեանի թիւ 83 (Ս. Ղազարի Ոսկեփորիկը): Սակայն անմիջապէս աւելցնեմ որ Արտաղ 1315ին կը յիշէ Առիստաղէս, Կիրակոս եւ Յովհաննէս Երզնկացիներէն զատ՝ Յովհաննէս վանական մը, որ կրնայ եւ զրբիչ եղած ըլլալ:



Թիւ 252 յիշատակարանին Կիրակոս փարպեղեւոր անտարակոյս Երզնկացին է, ինչպէս Երզնկացի Կարապետ քահանան է նաեւ զրիչը: Երեւանի այս թիւ 2100ը էջ 313ա. ունի կարեւոր յիշատակարան մը Գրիգորի Երզնկացիի եւ Կիրակոս Երզնկացիի մասին, որ դժբախտաբար Սաչիկեան անուշադրութեամբ չէ հրատարակել: Գրչութեան վայր պէտք էր նշանակել Երզնկա:

Թիւ 326 որ Երեւանի 1376ն է, Սաչիկեան նոյնպէս բոլոր յիշատակարանները չէ հրատարակած:

Թիւ 395ը Քարոզիչի չէ: Այս ձեռագիրը այժմ կը գտնուի իմ հաւաքածոյիս մէջ:

Թիւ 411ը խիստ համառօտագրեալ եւ ազճատեալ մէկ մասնիկն է Սարգիսեան ցուցակին Բ. մաս, էջ 173-6, հրատարակուած Վենետիկի Ճառքնտիրի յիշատակարանին: Այս Ճառքնտիրը գրուած է 1343-ին: Կը պակսի Սաչիկեանի յիշատակարաններուն մէջ:

Թիւ 369ին՝ տեղ պէտք է նշանակուէր Երզնկա, քանի որ զրիչը ուրիշ մէկը չէ՝ եթէ ոչ Ներսէս Կելընցին: Նոյնպէս նաեւ թիւ 414ին, որ գրուած է նոյն Ներսէս Կելընցիէ, ի վանս Ս. Յակոբայ Կայրոսին (Կապոս): Թիւ 626 յիշատակարանը Նոր Զուգայու այժմու թ. 515 Աւետարանէն է:

Սաչիկեանի այս հաւաքման մէջ՝ այս ու այն պատճառաւ կը պակսին սա յիշատակարանները. Սաղէմի թիւ 1322, գրուած 1310ին: Զմմառի թիւ 4, գրուած 1331ին: Գահրէի առաջնորդարանի թիւ 3, գրուած 1361ին: Պերլինի Կայսերական Մատենադարանի թիւ 25, գրուած 1361-1362ին: Էջմիածնայ հաւաքման թիւ 2104 գրուած 1318ին: Դարձեալ Զմմառի թիւ 136, գրուած 1383ին: Նախապէս Սեբաստիոյ Ս. Նշան վանքին Աւետարան մը 1372էն (Հանդ. Ամս. 1926, էջ 44-5): Էջմիածնայ «Արարատ» պաշտօնաթերթին մէջ հրատարակուած (1874, էջ 226) ՅԾՆ (906) կեղծեալ թուականով յիշատակարանը, որ գրուած է 1359-65ի միջեւ ատեն մը: Հ. Սարգիսեանի ցուցակին (Բ. մաս, էջ 173-6) Ճառքնտիրը 1343էն: Կոստանդին Երզնկացւոյ Տաղարանը ի Ս. Ղազար 1336էն: Դարձեալ Ս. Ղազարու թիւ 661ը 1339էն: Անդ Երզնկացւոյ Քերականը՝

1332էն: Իմ անձնական հաւաքմանս 1314-էն, 1321էն, 1387էն եւն. Աւետարաններ, Շարակնոցներ (որոնց մէջ նաեւ Սարգիս Պիճակէն երկու Շարակնոց): Այս ցանկը կարելի է բաւական երկարել, բան մը որ հոս աւելորդ կը նկատեմ: Գուցէ օր մը կարելի ըլլայ հաւաքել Սաչիկեանի հատորին մէջ չգտնուածները եւ դատ հարկով մը ամբողջացնել:

Հաւաքման թիւ 165 եւ 166 անտարակոյս կերպով Արտաղ գրուած ըլլալու են: Սաչիկեան՝ 165ին համար տեղ չէ նշանակած, իսկ 166ին համար հարցականով՝ Գլաճո՞ր նշանակած է:

Հատորին վերջը կը գտնենք յատուկ անունաց եւն. ցանկեր, որոնք մեծապէս մատչելի կ'ընեն այս խիստ կարեւոր գործը գանազան ուսումնասիրութեանց համար:

Իրապէս դժայլելի է Սաչիկեանի այս մեծաշխատ գործերուն համար թափած ճիգը: Տարակոյս չկայ որ գնահատական այս քանի մը տողերը ոչ մէկ կերպով կըրնան ներկայացնել իր կատարած գործին մեծ յարգը: Հոս դարձեալ անկեղծօրէն կ'ուզեմ շնորհակալ ըլլալ որ մանր մունր գիտողութիւններ, որոնք ըրինք վերը, պարզապէս նման գործեր աւելի ամբողջական տեսնելու ցանկութեամբ էր, եւ ոչ թէ որեւէ կերպով խճրճելու համար այս ընտիր աշխատանքը: Սաչիկեան՝ մեր արտասահմանեան աշխատողներու վրայ անխուսափելի պարտականութիւն մը կը թողու, մեր ալ մեր կարգին իրեն անմատչելի մը նացած յիշատակարանները հաւաքելով հրատարակելու: Վերջապէս նման գործեր մէկ անձով երբեք կարելի չէ գլուխ հանել, եւ միշտ յաւելուածական են:

Խոր սրտէ երախտապարտ ենք իրեն, եւ մաղթենք՝ ինչպէս որ կը յուսանք՝ չուշանայ օրը երբ վերջապէս ունենանք Ժ. Եւ Ժ. Դարու յիշատակարաններու հաւաքածոներն ալ, առանց մոռնալու որ կըրնան հատոր մը կազմել նաեւ հնազոյնէն մինչեւ Ժ. Դարու յիշատակարաններու հաւաքածոն ալ: Ասոնց հրատարակութեամբ եւ գործածութեամբ է միայն որ օր մը պիտի կարենանք փաստացի պատմութիւնը կազմել հայ մշակոյթի եւ պատմութեան:

Յ. ՔԻՐՈՍԵԱՆ

ՇՆՈՐ ՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱՐ ԵՆՔ

ԱճԻՄԵԱՆ ՀԱՅԿ. - Լեւոն Գրիգորեան՝ Երաժշտական, ուսուցիչ եւ խմբավար: Թեհրան, տպ. Իրանշահ, 1957, էջ 64:

ԱՅՎԱԶԱՆ ՊԱՎՍՍԱՐ. - Համեստ տուրք մը հայ նկարչական արուեստի դանձարանին: Պուէնոս Այրէս, 1957, էջ 96:

ԳԵՂԱՐԳ Բ. - Լիբանանեան համանուագ: Պէյրութ, տպ. Ատլաս, 1957, էջ 68:

ԳՈՒՅՈՒՄԸԱՆ ՅԱԿՈԲ. - Երեւանեան երգեր - բանաստեղծութիւններ: Ֆիլադելֆիա, 1957, էջ 142:

ԴԱՐԲԵՆ ԱՐՇԱԽԻՐ. - Առակներ: Պէյրութ, տպ. Արամազդ, 1957, էջ 80:

ԵՐԵՄԵԱՆ ԱՐԱՄ. - Կարապետ Սիսակ - կեանքն ու ստեղծագործութիւնները: 1957, էջ 42:

ԵՐԵՄԵԱՆ ԱՐԱՄ. - Յովհաննէս Թումանեան (Մահուան 30ամեակին տոթիւ): Ֆրէզնոյ, 1957, էջ 60:

ԹԷՔԷԱՆ ՎԱՀԱՆ. - Հայերգութիւն եւ Հատընտիր: Պէյրութ, հրտ. Էտվան, քիւ 35, տպ. Էտվան, 1957, էջ 247:

ԻՇԽԱՆ Մ. - Ողջո՞յն քեզ, կեանք: Պէյրութ, տպ. Լա-Ֆոնտայ-Բրէս, 1958, էջ 32:

ԿՈՍՏԱՆԵԱՆ (ԷԼՄԱՍԵԱՆ) ՎԻՔՏՈՐԻԱ. - Հայ քնար: Ֆրէզնոյ, 1954, էջ 53:

ՀԱՅԿԱԶՈՒՆ Ա. - Ժամանց հաճելի եւ օգտակար: Գահիրէ, տպ. Յաքէր, 1957, էջ 432:

ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿ. - Հայոց Հայրիկ (Մահուան յիսնամեակին տոթիւ): Պուէնոս Այրէս, տպ. Սիփան, 1957, էջ 106:

ՄԱՐԳԱՐԵԱՆ Ա. - Ծագկեայ փունջ: Ֆրէզնոյ, տպ. «Նոր Օր», 1954, էջ 237:

ՆԱՃԱՐԵԱՆ ԵՂԻԱ. - Դաշնակ զեկավարութիւնը օտարի ծառայութեան մէջ: Հալէպ, 1957, էջ 115:

ՉԱՐԼԳ ՂԱԶԱՐ. - Յուշամտեան Բարձր Հայրիկ - Կարենապատմութիւն: Պէյրութ, տպ. Մշակ, 1957, էջ 792:

ՍԻՏԱԼ Կ. - Արեւածագ եւ առաւօտ: Միացեալ Նահանգներ Ամերիկայի, 1957, էջ 158:

ՍԻՐՎԱՐԴ. - Արամ Աւարդական (Հերոս Փոքր Հայրիկ): Նիւ Եոթ, 1957, էջ 158:

ՏԱՏՐԵԱՆ ՍՈՒՐԷՆ Ա. - Նիկեիկա եւ Նիկեիկահայ գաղութը: Պէյրութ, տպ. Լա-Ֆոնտայ-Բրէս, 1958, էջ 125:

ՓՈԼՏԱՆԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ Լ. - Խրիմեան Հայրիկ (Մահուան յիսններորդ տարեկիցին տոթիւ): Նիւ Եոթ, 1957, էջ 79:

ՓԱՇԿԵԱՆ ՅՈՎՀ. Ս. - Լուսարձակ - Լուսասփիւռ: Փասատէնա, 1956, էջ 81:

ՕՇԱԿԱՆ ՎԱՀԷ. - Պատուհան: Պէյրութ, 1956, էջ 81:



ԱԶԴԱԿ րացաօրիկ - նուիրուած հայ ուսանողութեան: Հրտ. Հ. Յ. Դ. Զաւարեան Ուսանողական Միութեան: Ամերիկա, տպ. Կրդ. Հայոց, 1957, էջ 129 (մեծագիր):

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԻԿ - Հրտ. Համալսարանական Հայրենակցական Միութեան: Պոսթըն, տպ. Հայրենիք, 1957, էջ 301:

ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ Հանրապետական չրջանի Իսթանպուլահայ Գրականութեան - Հրտ. Արամեան Սանուց Միութեան: Իսթանպուլ, տպ. Վարօլ, 1957, էջ 339:

ՄԵՐ ԳԻՒՂԸ ԴԱՏԵՄ - Հրտ. Դատմի Լուսարձակ Ուսումնասիրաց Միութեան: Պոսթըն, տպ. Հայրենիք, 1958, էջ 256:

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱԼՊՈՄ - Բ. Շարք, թիւ 9. Սըմբատ: Հալէպ, 1958:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԶԱՐԲԱՀԱԼ ԳԱՆՈՒԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՄԵԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ - Թեհրան, տպ. Մոկերն, 1957, էջ 99:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱՐ - Սարկաւաղի րաժին: Հրտ. Ազգային Գէորգօֆֆ Վարժարանի: Ատտիս - Ապապա, 1958, էջ 14 (մեծագիր):

SUA RICEVUTA E RENDICONTI		PRIX DE L'ABONNEMENT ANNUEL	
Իտալիոյ համար . . .	3000 Լիր	Pour l'Italie . . .	3000 Lires
Արտասահմանի համար . . .	6 Զոլար	Pour l'Etranger . . .	6 Dollars
ԲՆԿ ԹԻՐ 250 ԺԻՐ -	0,50 Զոլար	Le Numéro: 250 Lires -	0,50 Dollars

Direzione - Amministrazione - Pubblicità - Abbonamenti - Isola San Lazzaro - Venezia (Italia) - Tel. 60-104
 Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia.
 Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia